ԲՈԼՈՐԸ.– Դե՛, Քաջ Նազար, առաջ ընկի: Բերէ՛ք Քաջ Նազարի ձին:

Բերում են: Վագրի մորթին գցում ձիու վրայ, Նազարին նստեցնում են վրան, ձեռքն են տալիս դրօշակը, եւ շրջապատելով նրան, պատրաստւում են շարժուելու դէպի ձախ:

ԹԱՄԱԴԱ.– (Դուդուկչիներին) Ապա՛ մի զուռնա:

ԴՈՒԴՈՒԿՉԻՆԵՐԸ.– (Հանում են զուռնաները եւ փչում):

ՆԱՁԱՐ.– (Անհանգստացած կպչելով ձիուն) Գեադա՛… Առա՛ջ ընկէք… Բը՛, բը՛, բը՛…

ԹԱՄԱԴԱ.– (Միւսներին) Առա՛ջ ընկէք:

ՍԱՔՈ.– (Միւսներին) Առա՛ջ ընկէք:

ԹԱՄԱԴԱ.– (Առաջ ընկնելով) Եկէ՛ք, (Եւ իսկոյն ետ է գալիս:)

ՎԱՐԺԱՊԵՏ.– Յառա՛ջ (Առաջ է ընկնում եւ իսկոյն ետ գալիս):

ՏԷՐՏԷՐ.– (Ետ-ետ գալով) Ի զէ՞ն, առա՛ջ:

ԲՈԼՈՐԸ.– Էհե՛յ (կանգնած են տեղները:)

Հանկարծ Նազարի ձին խրտնում է եւ նրան տանում:

ԲՈԼՈՐԸ.– Հասէ՛ք… (Վազում են նրա հետեւից:)

ՎԱՐԱԳՈՅՐ